*ՆԱԽԱԳԻԾ*
*ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ*

Պ-342-27.06.2018-ԱՍ-011/2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## <<ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** <<Արհեստակցական միությունների մասին>> 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-135 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությունով.

<<Արհեստակցական կազմակերպության մասնակիցներ (անդամներ) կարող են լինել նաև տնտեսության տարբեր ճյուղերում գործունեություն իրականացնող գործատուների հետ աշխատանքային պայմանագիր կնքած աշխատողները: >>:

***Հոդված 2.*** Օրենքի 19-րդ հոդվածի <<բողոքարկել նրանց գործողությունները (անգործությունը)>> բառերը փոխարինել <<նրանց որոշումների, գործողությունների կամ անգործության իրավաչափությունը վիճարկելու պահանջով դիմել դատարան>> բառերով:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

### Երկրորդ ընթերցման ժամանակ փոփոխվող հոդվածների մասին տեղեկանք


# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ


## <<ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Deleted:** ԼՐԱՑՈՒՄՆԵՐ


***Հոդված 1.*** <<Արհեստակցական միությունների մասին>> 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-135 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությունով.

<<Արհեստակցական կազմակերպության մասնակիցներ (անդամներ) կարող են լինել նաև տնտեսության տարբեր ճյուղերում գործունեություն իրականացնող գործատուների հետ աշխատանքային պայմանագիր կնքած աշխատողները: >>:

***Հոդված 2.*** Օրենքի 19-րդ հոդվածի <<բողոքարկել նրանց գործողությունները (անգործությունը)>> բառերը փոխարինել <<նրանց որոշումների, գործողությունների կամ անգործության իրավաչափությունը վիճարկելու պահանջով դիմել դատարան>> բառերով:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: